



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



17209

369

u-23

1864

2010

336

ՏԵՂԵԿԱԳԻՐ


ազգային

ԻԱՂԱԲԱԿԱՆ

ԺՈՂՈՎՈՅ

2001


369
—
4-23



ՏԵՂԵԿԱԳԻՐ

25235. Ч. 3.

ՀԳՐԱԴԱՐԱՆ



4395-56



369  
K 23

25

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Ա. Ռ.

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ

ՈՐՈՇԵԱԼ ՅԱՏԵՆԻ

ՔՍԱՆԵԻՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ

1864 ՄԱՅԻՍ 14

Ի ՊԱՏՐԻԱՐԻՍՏՈՒՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՒՐԳՃԵԱՆ

— 1864 —

*Handwritten signature and text in Armenian script at the bottom of the page.*

222 111 111 111 111

111 111 111

111 111 111 111 111

111 111 111 111 111

111 111 111 111 111

111 111 111

111 111 111 111 111



111 111 111 111 111

— 1884 —

111 111 111 111 111

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

ԱՌ

## Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ Ն

Ինչպէս որ յայտնի է ամսոյս 8 ին դումարուած Ընդհանուր ժողովը՝ ազգային հին ու նոր պարտուց եւ ընդհանուր տրոց կարեւոր խնդիրները քննութեան առնելով, այլ եւ այլ խորհրդածութիւններ եւ դիտողութիւններ ըրաւ, Քաղաքական ժողովոյ կողմէ կազմուած Յանձնաժողովին տեղեկագիրը իր վիճաբանութեան հիմ բռնելով: Եւ ըստ որում Ազգին սահմանադրական ընթացքին մէջ ծագելիք նորանոր պիտոյից նկատմամբ յիշեալ տեղեկագրին ելումտից տրամադրութիւնը թերի եւ անբաւական գտաւ եւ Քաղաքական ժողովոյ նոյն տեղեկագրին քանի մը կէտերուն վրայ ներկայացուցած դիտողութիւնները գոհացուցիչ չի համարեց, ուստի արժան դատեց որոշել՝ 1<sup>o</sup>. Յանձնաժողով մը կազմել, որոյ պաշտօնն ըլլայ Ազգին արդի վիճակը քննել եւ անոր պիտոյքը ճշգրտել, եւ 1865 տարուան համար օրինաւոր ելումտից հաշուէկշիռ մը պատրաստել եւ եկամուտ ճարելու միջոցները առաջարկել. 2<sup>o</sup>. Ազգին պարտքը այս տարուան մէջ վերցունելով մինչեւ տարւոյս վերջը պէտք եղած ծախքերը սահմանել, եւ ասոնց համար պէտք եղած ստակը որչափ եւ ինչպէս հաւաքել հարկ է յայտագրել:

Ընդհանուր ժողովը Քաղաքական ժողովին յանձնեց այս ամօրէնութեանց գործադրութիւնը սն պայմանաւ որ այսօր պատկառելի Ատեանիդ ներկայացունէ իր որոշմանց Տեղեկագիրը:

Քաղաքական ժողովը՝ թէ եւ անկատար եւ մեծագոյն մասն գտնելու անյոյս՝ Սրբազան Պատրիարք Հօր հրաւերին վրայ երէկուան օրը նիստ ըրաւ, պատկառելի ժողովոյդ

յան ձևարարութիւնը ինչպէս որ պարան է, կատարելու համար :

Նախ՝ Քաղաքական ժողովը կը փութայ յայտնել թէ առ այժմ իր ամբողջութիւնը չունենալուն՝ Ընդհանուր ժողովոյդ առաջին խնդիրը, այս է՝ Յանձնաժողովին ընտրութիւնը անմիջապէս կատարել խոհեմութիւն չը դատեց, յուսալով որ այս յապաղմանէ անպատեհութիւն մը չը ծագիր, քանի որ յիշեալ Յանձնաժողովը ապագային համար պիտի գործէ եւ անոր ընտրութիւնը յարմար առթիւ օրինաւորապէս կատարել դիւրին է :

Երկրորդ՝ Ազգային պարտուց եւ ընդհանուր տրոց խընդիրը՝ իր կազմած Յանձնաժողովին տեղեկագրէն մեծաւ մասամբ պարզուած, եւ Տնտեսական խորհրդոյ միջոցաւ ներկայ տարւոյս ազգային ելմտական վիճակին վրայ պէտք եղած ծանօթութիւնները արդէն ստացած ըլլալով՝ Քաղաքական ժողովը այս ստիպողական պարագայիս մէջ չի վարանեցաւ հետեւեալ որոշումներն ընել, զորս կը ներկայացունէ պատկառելի ժողովոյդ քննութեան եւ հաճութեան :

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՊԱՐՏՈՒՑ ՎՃԱՐՄԱՆ ԽՆԴԻՐ

Քաղաքական ժողովը ազգային պարտուց եւ պահանջմանց Տումարին նայելով,

Պարտք կը գտնէ — մետաղեայ դրամ	դրշ	669,628
Իսկ պահանջք — » »	»	447,980
	Բաց պարտք	» 221,648

Եւ նախորդ Յանձնաժողովին պէս կը մտածէ որ սոյն բաց պարտուց գումարը 500,000 դուրուշի հանելու հարկ կայ ըստ որում շատ հաւանական է որ պահանջից թերեւս մէկ մէկ մասը անվճարելի մնայ :

Արդ՝ Քաղաքական ժողովը հին եւ նոր պարտուց գումարը մինչեւ տարւոյս վերջը վճարելու եւ յաջորդ նոր տարուան հաշիւը մաքուր բռնելու ձեռնհաս կրնայ գտնուիլ, եթէ՝ 1<sup>o</sup>. Պահանջմանց գումարը ամբողջ հաւաքել յաջողի այս տարուան մէջ . եւ 2<sup>o</sup>. 500,000 դուրուշի գումար մ'ալ բացէն ազգային կեդրոնական սնտուկը մտնէ : Արդէն սոյն խնդրոյն վրայ Քաղաքական ժողովը Տնտեսական խորհրդոյ առաջարկ

կութեամբը ընդհանուր ժողովին յայտնած է թէ պարտքը ստիպողական եւ խիստ ծանր չըլլալով, հարկ չը կայ անոր համար արտաքոյ կարգի միջոցներու դիմել, եւ եթէ Ազգային Աեդրոնական սնտուկին եկամուտը տարին մէկ միլիոնի հասնի, ազգային ստիպողական ծախուց բաւելէն դատ տարուէ տարի պարտքն ալ թեթեւալուծ կրնայ ծառայել, Բայց ընդհանուր ժողովն այս առաջարկութեան դո՛հ չըլլալուն եւ պարտքը այս տարի հարկաւ վերցունելու որոշում ըրած ըլլալուն համար, Քաղաքական ժողովը կը պարտաւորի յայտնել որ ասոր միակ միջոց ~~+~~ կը կարծէ որ թէպէտ դժուարաւ գործադրելի եւ ինչպէս Յանձնաժողովը կը կարծէ, միշտ վնասակար մեր Ազգին համար, սակայն միակ միջոց է բաւական եկամուտ չունեցողի մը բաց պարտքը գոցելու:

Սակայն եթէ ընդհանուր ժողովը կը փափաքի, ինչպէս որ իր որոշմամբը յայտնեց, որ ազգային պարտքը անմիջապէս վճարուի եւ պահանջմանց անթերի եւ անմիջական հատուցումը ստանալու համար ծագելիք դժուարութիւններուն չը համողուի, այն ժամանակ Ազգային Վարչութիւնը բացէն 669,628 ղուրուշի կը կարօտի, որպէս զի իսկոյն Ազգային պարտքը վճարէ ամբողջապէս:

**ԱԶԳԱՅԻՆ ԾԱԽՈՒՑ ԵՒ ՀԱՍՈՒԹԻՑ ԽՆԴԻՐ**

Քաղաքական ժողովը մինչեւ տարւոյս վերջը պէտք եղած ծախուց խնդրոյն վրայ խորհրդակցելով, նկատեց որ սրդի սահմանադրական դրութեան պատճառաւ ազգային ծախուց մէկ քանի աղբիւրները աւելցունելու եւ քանի մը նոր կարեւոր պիտոյից համար նորանոր ծախքեր սահմանելու անհրաժեշտ կարօտութիւն կը տեսնուի:

Ուստի ազգային Հիւանդանոցի եւ Պատրիարքարանի ներքին ծախուց գումարները անփոփոխ պահելով, Քաղաքական ժողովը ազգային Դիւանատան եւ պատահական ծախուց գումարները յաւելցուց, եւ Ուսումնական պիտոյից համար յատուկ գումար մը սահմանեց: Պատահական ծախուց մէջ պիտի պարունակուին ոչ միայն այս անուամբ մինչեւ հիմայ ճանչցուած ծախքերը, այլ եւ այսուհետեւ Սահ-

մանադրութեան գործադրութեան, նոյնպէս ազգային այլ եւ այլ պատահական գործոց քննութեան եւ անօրէնութեան համար գաւառները դրկուած եւ դրկուելիք Տեսուչներու եւ քննիչներու վարձքը եւ ծախքը վճարելու մտօք պէտք եղած ծախքերը :

Այս տրամադրութեամբ Քաղաքական ժողովը հետեւեալ ծախուց ցուցակը որոշեց :

ԾԱԽՔ

Հիւանդանոցի համար	դրշ	600,000
Պատրիարքարանի »	»	420,000
Դիւանատան »	»	450,000
Կարօտեալ թաղերու »	»	55,000
Պատահական	»	500,000
Ազգային դաստիարակութեան	»	250,000
	Գումար	» 1,475,000

Արդ՝ այս ծախուց գումարին դէմ լոկ 600,000 ղուրուշի ազգային հասոյթ կայ . [եւ հետեւեալպէս՝ 875,000 ղուրուշ բաց կը մնայ :

Այս բացը գոցելու համար ազգային ուղղակի եւ անուղղակի տրոց միջոցները կը ներկայանան : Անուղղակի տրոց մասին Քաղաքական ժողովը որոշեց մինչեւ հիմայ սահմանուածները անփոփոխ պահելով եւ բարեկարգութեան մէջ դնելով, ծննդեան եւ վախճանման վկայագիրներու համար ըստ աստիճանի՝ 5, 10 եւ 20 ական ղուրուշ նոր տուրքը հաստատել : Իսկ ուղղակի տրոց նկատմամբ Քաղաքական ժողովը՝ ի բաց առեալ անուղղակի տրոց միջոցաւ հաւանականաբար գոցուածը, նկատեց որ Ազգային ծախուց բացը գրեթէ 800,000 ղուրուշի կը հասնի, եւ ըստ որում այս գումարը Յանձնաժողովին ներկայացուցած բաշխման եղանակէն հաշիւ եղած 400,000 ղուրուշին կրկնապատիկն է, որոշեց նոյն բաշխման ցուցակին կարգը պահելով իւրաքանչիւր կարգին գումարը կրկնապատիկել, որով 800,000 ղուրուշի գումար մը կրնայ հաւաքուիլ նոյն ենթագրութեան վրայ, այսպէս .

Վ. Ա. Ն.

ՅՈՒՑԱԿ ԲԱՇԽՄԱՆ

Ա. Կարգի համար	1000 շաբաթը	1000 շաբաթը	50 Կարգի համար	50000 շաբաթը
Բ.	600	»	100	»
Գ.	400	»	200	»
Դ.	300	»	400	»
Ե.	200	»	600	»
Զ.	150	»	1650	»
Է.	80	»	1000	»
Ը.	40	»	2000	»
Թ.	20	»	2000	»
Ճ.	10	»	2000	»
		» 10000		» 897500

Քաղաքական ժողովը այս բաշխման եղանակը որոշելէն ետեւ, ընդհանուր տրոց հաւաքման եղանակին վրայ մտածեց, եւ իւրաքանչիւր ազգային անհատի կարողութեան չափը արդարութեամբ որոշելը սկզբունք բռնելով Յանձնաժողովին առաջարկած միջոցն ընտրեց. այսինքն՝ իւրաքանչիւր թաղի մէջ մէկ մէկ մասնաժողով կազմել որ թաղեցւոց կարողութեան համեմատ զանոնք կարգերու դասաւորէ եւ անոնց ցուցակը Ազգային վարչութեան ներկայացունէ. որն որ իր կողմէ ալ պէտք եղած քննութիւնը ընելէ ետեւ յատուկ հաւաքիչներ կարգէ եւ անոնց միջնորդութեամբը ըստ ցուցակի որոշեալ տուրքերը հաւաքել տայ: Սակայն եթէ գտնուին այնպիսի անձինք՝ որ իրենց պարտքը հատուցանելու դժկամակին, Ազգային վարչութիւնը՝ քանի որ այս կէտն ալ հաւաքման եղանակին կը վերաբերի, պարտազանցները կարգի բերելու համար աջադրեց նախ՝ անոնց յորդոր կարդալ. եթէ անլսելի մնայ՝ այնպիսիներուն՝ ազգային այլ եւ այլ պաշտօնական ճիւղերուն յարաբերութիւն ունենալիք գործերնին պատահինէ՝ արգելք դնել՝ մինչեւ որ իրենց որոշեալ տուրքը վճարեն: Եթէ այս ընթացքն ալ չազդէ այնպիսիներուն դէմ, ապա ըստ պատշաճի եւ աստիճանի աւելի զօրաւոր միջոցներ բանեցունելու հարկը կը տեսնէ:

Քաղաքական ժողովը՝ ազգային պարտուց եւ ընդհանուր տրոց մասին ըրած վերոյիշեալ որոշումները պատկառելի ժողովոյդ հաւանութեան յանձնելով, արժան կը դատի

անցնել Ազգային դատարանական վերալերևալ սկզբնա-  
կան խնդիրներուն, որոնք նախորդ նիստին մէջ կախ մնա-  
ցին :

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Քաղաքական ժողովը՝ ազգային գիշերօթիկ դպրոցներ  
հաստատելու կարեւորութիւնը տեսնելով, այս տարուան  
ծախուց մէջ ազգային դատարանական համար գումար  
մը որոշեց, որպէս զի կարող ըլլայ փոքր 'ի շատէ այս նը-  
պատակին հասնելու, սակայն միւս կողմէ նկատելով որ Ազ-  
գային կեդրոնական անտուկը գիշերօթիկ դպրոցներու բոլոր  
պիտոյից ինքնին հասնելու անբաւական, եւ հետեւաբար  
մեծամեծ նպաստից կարօտ է, եւ այս նպատը Ազգը հայ-  
թայթելու անզօր, որոշեց պատկառելի Ժողովոյդ ուշադրու-  
թեան յանձնել թէ արդեօք 'ի պահանջել հարկին ինքը կըր-  
նայ ստիպել որ քանի մը հարուստ թաղեր մասնակցին Վարչ-  
չութեան ձեռնարկելիք դպրոցներուն ծախուցը :

Իսկ կղերական դպրոցի մասին՝ Ազգային Վարչութիւնը,  
որ այս ձեռնարկութեան ուրուագիծ մը պատրաստելու  
համար խառն Յանձնաժողով մը կազմած էր, արժան կը դա-  
տի առանց այս խնդրոյն այլ եւ այլ հանգամանաց մէջ մըտ-  
նալու, առ այժմ Ընդհանուր ժողովոյդ հաւանութիւնը  
խնդրել Մայրաքաղաքիս մէջ Ընծայարան մը հաստատելու  
համար : Այս Ընծայարանին նպատակը պիտի ըլլայ Մայրա-  
քաղաքիս կրօնական դասուն ուսմամբք բարգաւաճանացը  
օգնել եւ միանգամայն՝ ըստ Սահմանադրութեան վանքերու  
մէջ հաստատուելիք Ընծայարաններուն համար կղերական  
ուսուցիչներ հասցունել :

Քաղաքական ժողովը՝ սոյն Տեղեկագիրը պատկառելի  
Ժողովոյդ ուշադրութեան յանձնելով, վերոյիշեալ խնդրոց  
վրայ վերջնական վճիռը ստանալու կսպասէ, որպէս զի  
գործադրութեան ձեռնարկէ յօգուտ Ազգին :



Ի ԴԻՄԱՅ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ  
Ս. ԱՍԼԱՆԵԱՆ  
ԱՏԵՆԱՊԵՏ







207



1864

2013

<< Ազգային գրադարան



17909

NL0051061

